Հայաստանի Հանրապետություն
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

«___» _____ 2022 թ. N_____

ՌՍ/ԺՍ-1-1/32635-2022 23.12.2022թ.

**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ռ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 1222-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) համաձայն Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2075-Ն որոշման հավելվածի 24-րդ կետի 7-րդ ենթակետի, ենթակա չէ կարգավորման ազդեցության գնահատման:

Նախագծով ներկայացվող նորմը՝ 2000 մետր և ավելի բարձրության վրա գտնվող բնակավայրերի պետական և տեղական ինքնակառավարման մարմին չհամարվող պետական և համայնքային բյուջետային հիմնարկների աշխատողների համար սահմանել լրավճար 8000 ՀՀ դրամի չափով, չի փոփոխվել: Նախագծում ըստ էության կատարվել են ձևակերպումների հետ կապված ճշգրտումներ:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծով սահմանվող բարձր լեռնային բնակավայրերի ցանկը արդեն իսկ սահմանված է ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի N 756 որոշմամբ: Թե ներկայացված Նախագծով, և թե նշված որոշմամբ որպես բարձր լեռնային բնակավայրեր սահմանված են թվով 116 բնակավայրեր: Ուստի անհասկանալի է արդեն իսկ սահմանված ցանկը սահմանել նորից նոր իրավական ակտով:

Մեր կարծիքով իրավական ձևակերպումների հակասություններից խուսափելու համար ներկայացվող Նախագծով պետք է ուժը կորցրած ճանաչել 1998 թվականի նոյեմբերի 27-ի N 756 որոշման համապատասխան դրույթները և նոր միայն սահմանել բարձր լեռնային բնակավայրերի ցանկը կամ հրաժարվել բարձր լեռնային բնակավայրերի նոր ցանկ սահմանելուց, հիմք ընդունելով գործող ցանկը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**